№ 153 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 16

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 153 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 16

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

Ամսական Մէկ ռուբլի

Ամերիկա տարեկան .	6 դոլլար
Եւրոպա » . .	30 ֆրանկ
Պարսկաստան » .	10 ռուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԳՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск. телеф. № 10—56
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն հարիւրի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրութեան ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։
Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենոգրաֆիա։
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։
ԿՈՒՐՍԵՐ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑՎԱԾ Է ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆ
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և ժամանակն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.
(առ.) 20—1

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՇՒԻՆ

—

Հետաքրքրական են այն հայեցակէտերը, որոնք արտայայտվում են Թիւրքական սահմանադրութեան առթիվ։

Նրանց մէջ կարելի է նկատել մի քանի ցուցումներ ապագայ տրամադրութիւնների ու գործառնութիւնների վերաբերութեամբ Թիւրքական գործերի շուրջը։

Ահա, օրինակ, ինչպիսի հայեացքներ են յայտնվում գերմանական քաղաքական մամուլի մէջ, որը փոքր ի շատէ իր սրտին մօտ է առնում Բ. Դրան և Թիւրքաց սուլթանի բաղդն ու շահերը։

— Թիւրքական սահմանադրութեամբ ոչնչանում են Միւրցշտէգի և Ռեվելի որոշումները։

— Անգլիայի և Ռուսաստանի առաջարկած ծրագիրները Մակեդոնիայի վերաբերութեամբ պէտք է դնել առժամանակ յետ մղվեն։

— Մակեդոնական բարենորոգումները մտցնելու խնդիրը կախված է այժմ Թիւրքական պարլամենտից։

— Յեղափոխական շարժումը կը թուլանայ սուլթանի արած զիջումներից և երիտասարդ-Թիւրքերի ոյժերը կը ջլատվեն զգալի կերպով։

— Թիւրքական ժողովուրդը այսուհետև իր քաղաքական գործի տէրը կը դառնայ և ընդհանուր օսմանեան քաղաքացիական գաղափարի առաջ կը կորցնեն իրանց նշանակութիւնը առանձին ազգութիւնների արտօնութիւնների խնդիրները։

Եւ այդպէս՝ գերմանական քաղաքական մամուլը գտնում է Թիւրքական սահմանադրութեան հրատարակութեան մէջ այն, որ սուլթանի այդ գործողութեամբ իբր թէ պարտութեան կամ անաջողութեան են մատնվում Ռուսաստանի և Անգլիայի պահանջները Թիւրքիայի վերաբերութեամբ։

Բայց եթէ այդպէս էլ նայելու լինէինք կատարված եղելութեան վրա՝ ինչ ենք մենք տեսնում իրապէս ասպարէզում։ Տեսնում ենք սահմանադրութիւն՝ տրված Թիւրքիայի ժողովրդին։

Եւ եթէ Ռուսաստանի և Անգլիայի ուժեղ պահանջները բարենորոգութիւնների վերաբերութեամբ դրել են սուլթանին և Բ. Դրանը տալ սահմանադրութիւն ամբողջ պետութեանը, ինչը և որ քաղաքականութիւնը կարող էր աւելի աջող և մեծ արդիւնքներ առաջացնել, քան այդ տեսակ արմատական զիջումը Թիւրքիայի կառավարութեան կողմից։

Ռուսաստանը և Անգլիան միայն գոհ կարող են լինել այն բանից, որ նրանց որոշ պահանջների շնորհիւ ստացվում է աւելի ընդարձակ բաւարարութիւն Թիւրքիայի ժողովրդի համար և նրանք ստիպված չեղան նորանոր հարցեր յարուցանել Թիւրքիայի այս ու այն շրջանի բարեկարգութեան մասին։

Սակայն պէտք է նկատենք, որ սխալ և կործանիչ ճանապարհի վրա կանգնած կը լինի Բ. Դուռը, եթէ նա սահմանադրութեան և բարենորոգութիւններ տալու խնդիրներում կը ղեկավարվի ոչ անկեղծ ցանկութեամբ՝ շնորհելու իսկական բարիքներ իր ժողովրդին, այլ աչքի առաջ կունենայ գլխաւորապէս դիպլոմատիական հաշիւներ, արտաքին քաղաքականութեան խորամանկահիւս անդրադարձումներ և կողմնակի նպատակներ։

Դա ճակատագրական մոլորութիւն կը լինի։

Եւ երբ մի քանի ժամանակ անցնելուց յետոյ ժողովուրդը կը նկատէ, որ նա խաբված է եղել և իրապէս չէ ստանում իր պահանջներին բաւարարութիւն, այն ժամանակ նա հանդէս կը գայ աւելի սուր պահանջներով և առաջ կը բերէ ծանր ու սոսկալի երկունքներ պետական կեանքի մէջ, մինչև որ հաստատված կը լինեն հիմնական քաղաքացիական ազատ կարգեր երկրի մէջ։

Թէ Եւրոպան և թէ Թիւրքիայի ժողովուրդները շատ անգամ են խաբված եղել Եըլդզի խոստումներից և վերապահութեամբ ու մի որոշ կասկածով են նայում տեղի ունեցող դէպքերի վրա։

Ուստի Եըլդզը աւելի՝ քան երբ և իցէ՝ պէտք է զգուշութեամբ վերաբերվէ իր առաջիկայ քայլերին, դէն շպրտէ կողմնակի նկատումները և առանց յետին մտքերի ձեռնարկէ երկրի բարեկարգութեան գործին սահմանադրութեան միջոցով։

Առանց խորամանկութիւնների և վերապահումների, առանց որոգայթների և մեքենայութիւնների։

Ա. Քալանթար

ԹԻՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

—

Կ. Պոլիս, 14 յուլիսի

Երբ մեծ վէգիրը ընդունում էր օտար պետութիւնների ներկայացուցիչներին, ցուցարարների խմբերը ներս էին խուժում Բ. Դուռը, բացագանչութիւններ էին անում ի պատիւ սուլթանի և ողջունում էին սահմանադրութեան վերականգնումը։ Հոռետօրների թւում կար և մի թիւրք կին։ Մեծ վէգիրը յաճախակի դուրս էր գալիս ամբոխի առաջ և խոստացաւ հաղորդել փադիշահին երախտագէտ ժողովրդի բերանից իր լսած հաւատարիմ հպատակութեան զգացմունքների արտայայտութիւնները։ Նպաստաւոր տեղեկութիւններ են ստացվում գաւառներից։ Երկիրը հանդիստ է։ Լրագրիրների ցենզուրան սնկործութեան է մատնված։ Առհասարակ ոստիկանութեան հսկողութիւնը շատ թուլացած է։ Սալոնիկում, երբ Հիլմի-փաշան հանդիսաւոր կերպով յայտնեց սահմանադրութեան հրատարակումը, երիտասարդ-Թիւրքերը ի կատար ածեցին լրտեսների—երկու օֆիցէրի և մի ոչ զինուորականի—մահվան դատավճիռը ուխտադրուժ լինելու համար, հրացանագարկ անելով նրանց։ Թիւրքաց լրագիրները և տեղական մամուլի ուրիշ օրգաններ հրաժարվեցին այլևս ենթարկվելու ցենզուրային, մատնացոյց անելով սահմանադրութեան հրատարակած մամուլի ազատութիւնը։ Մամուլի լեզուն չափաւոր է։ Լրագրիրները ամենամեծ յարգանքով են խօսում սուլթանի մասին, ոգևորված կերպով շնորհակալութիւն յայտնելով նրան սահմանադրութեան շնորհման համար։

(«Հ. Գ.»)

—

Կահիրէ.—Թիւրքական սահմանադրութեան վերականգնումը մեծ տպաւորութիւն գործեց Եգիպտոսում։ Փողոցներում և ժողովներում կարելի է տեսնել եղբայրանալու տեսարաններ երիտասարդ-Թիւրքերի և հայերի միջև։ Արաբական մամուլը սկեպտիկաբար է վերաբերվում դէպքերին։

(«Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս.—Սալոնիկից հաղորդում են, որ շարժումը նոր ուղղութիւն է ընդունում. ցոյցերը սուլթանի դէմ խիստ բնաւորութիւն են ստանում. բաց աշկարա խօսում են Աբդիւլ-Համիդի գահընկեցութեան մասին։ Հոգևորականները միացան զինուորականներին։

Հիլմի-փաշան տեղական երիտասարդ-Թիւրքերի կոմիտէի հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ՝ միջոցներ ձեռք առաւ քաղաքը պաշտպանելու համար։ («Հ. Գ.»)

—

Երիտասարդ թիւրքերի ծրագիրը.—Երիտասարդ Թիւրքերը հրատարակել են հետևեալ ծրագիրը, որի իրագործմանը նրանք ժամադիր են ձգտել զինված ոյժով. 1) պարլամենտի գումարումը բոլոր ազգութիւնների ներկայացուցիչներից առանց կրօնի խտրութեան, 2) զինուորական ծառայութիւնը հաւասարապէս պարտաւորեցուցիչ է թէ քրիստոնեաների համար, թէ Թիւրքերի համար, 3) պաշտօնները կարող են վարել ինչպէս Թիւրքերը, նոյնպէս և քրիստոնեաները։

—

Երիտասարդ թիւրքերը թիւրական կառավարութեան մասին.—Երիտասարդ Թիւրքերի շարժման պարագլուխներից մէկը, որ ապրում է Պարիզում, հետևեալ կարծիքներն է յայտնել իրանց կուսակցութեան նպատակների մասին։ «Մեր ծրագիրը շատ հասարակ է։ Մենք ձգտում ենք առաջադիմութեան սուլթանի հետ միասին աշխատելով։ Մենք չենք ուզում տապալել ներկայումս գոյութիւն ունեցող կաղմը։ Իսլամի օրէնքներից դուրս՝ կառավարող սուլթանը պարտաւոր է կատարել նրանց խիստ ճշտութեամբ։ Միայն ստիպնաբար կարելի է ստեղծել պարլամենտական կաղմ։ Թիւրքիան խառնակիչ և անխիղճ աւանտիւրիստների ձեռքին զոհ է այսօր, այնտեղ տիրում է անիշխանութեան և բռնակալական կամայականութեան խառնուրդը։ Ժողովրդի տնտեսական և սոցիալական զարգացումը ջլատված է։ Ամեն տեսակ ձեռնարկութիւնների և կօնցեսսիաների միակ հովանաւորողը սուլթանն է։ Երեսուն տարի նա իր ապարանքում ապրում է իբրև գերի, շրջապատված բոլոր ազգութիւնների փչացած մարդկանցից բաղկացած կամարիլայով»։

—

Աբդիւլ-Համիդի քրոջ որդի Սաբահ-Էդդին իշխանը, որ երիտասարդ-Թիւրքերի ղեկավարներից մէկն է, «Matin»-ում տպագրված իր մի յօդուածում ապստամբութեան պատասխանատուութիւնը դցում է սուլթանի վրա։ Հիմա դժուար է մի որևէ որոշ բան ասել բռնկված ապստամբութեան ելքի մասին,— գրում է իշխանը,—բայց լիբերալ շարժումը վերջիվերջոյ անպայման կը յաղթանակի։ Պետութիւնները չը պէտք է հակառակ գնան այդ շարժումներին, այլ նըպաստեն նրանց, որովհետև միմիայն սահմանադրական ռէժիմը կարող է վճռել այն խճճված հարցերը, որոնք քայքայում են Թիւրքաց կայսրութիւնը։

«Kölnische Zeitung» թերթում Սալոնիկից գրում են յուլիսի 19-ի թւագրով. «Ոչ մի կասկած չը կայ, որ երիտասարդ-Թիւրքերի կոմիտեի ազդեցութիւնը չափազանց շատ է տարածված բանակի, զինուորականների և բուրժուազիայի վրա։ Ներկայ րոպէում կոմիտեը ամեն միջոց ձեռք է առել հաւատարիացնելու համար քրիստոնեաներին և օտարերկրացիներին, որ նրանց կեանքն ու ինչքը կատարեալ ապահովութեան մէջ են գտնվում։ Տերրորական գործողութիւններ գործադրվում են միայն լրտեսների դէմ։ Հաւատացնում են, որ ոչ մի զօրք չի համաձայնի մուսուլման ապստամբների դէմ դուրս գալու։ Փոքր Ասիայից բերված զօրքերին ասել էին, թէ նրանց տանելու են բալգարների դէմ։

Գեներալ Հաղի-փաշան, որը մի մեծ բանակի հետ անցել էր երիտասարդ-Թիւրքերի կողմը, գործում է Մօնաստիրի և Ուսկիւբի մէջև։ Յուլիս 18-ի սեղմուրքին սուլթանը ընդունեց գվարդիայի օֆիցէրներին և բոլորին էլ մէկ աստիճանով բարձրացրեց։ Օտար դեսպաններին սուլթանը յայտարարեց, որ ինքը մեծ նշանակութիւն չէ տալիս մակեդոնական ապստամբութեանը։

Բարձրաստիճան մոլլա Սաիբի ձերբակալութիւնը կապ ունի երիտասարդ-Թիւրքերի շարժման հետ։ Սաիբը հանդուցեալ շեյխ-իւլ-իսլամ Հայրուլլահի փեսան է, այն շեյխ-իւլ-իսլամի, որը 1876 թուականին ստորագրել էլ էր Աբդիւլ Ազիզին գահընկեց անելու ֆէթվան։

Մօնաստիրից ստացված՝ հիպատոսների հեռագիրները հաւատացնում են, որ շարժումը բոլորովին կազմակերպված չէ և հեշտութեամբ կարող է ընկճվել։

28 բատալիոն ըէդիֆների մոբիլիզացիան Փոքր Ասիայում արագութեամբ է տեղի ունենում, թէ այնտեղից Սալոնիկ փոխադրված են առայժմ միմիայն 800 մարդ։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԱԼՈՒՍՏԸ

—

Ռէվէլ, 14 յուլիսի։ Թագաւոր Կայսրի հանդիպումը ֆրանսիական հանրապետութեան նախագահի հետ կայացաւ ռէվէլեան նաւակայանում ցերեկվայ 3 ժամ 44 րոպէին։ Ֆրանսիական նաւատորմին դեռ Դագէսրորտի մօտ դիմաւորեցին ռուս նաւատորմային ականանաւերը Նորին Մեծ. շքախմբի կօնարադմիրալ Էսսէնի հրամանատարութեամբ։ Ֆրանսիական նաւերին ուրա էին կանչում։ Ֆրանսիական դրօշակները ծածանվեցին ռուսական ականանաւերի կայմերի վրա։ Ֆրանսիական նաւատորմի նաւերը ի պատասխան բարձրացրին զինուորական դրօշակները։ Հէնց այդտեղ դիմաւորեցին Ֆրանսիական հանրապետութեան նախագահին ֆրանսիական դեսպանութեան պաշտօնեաները Ռուսաստանում։ Ռէվէլեան նաւակայանում արդէն ցերեկվայ 2-րդ ժամին կարելի էր ծովի վրա տեսնել երկու խումբ ծուխեր, որոնք ցոյց էին տալիս ֆրանսիական նաւատորմի մօտենալը։ Նրա առաջից ընթանում էին ֆրանսիական «Կասսինի» նաւը ֆրանսիական նախագահի դրօշակի տակ, «Վէրիտէ» զրահակիրը, ապա նրան ուղեկցող «Դիւպլեքսիտուար» զրահակիր կրէյսերը, վերջապէս «Արկէբիւզ» և «Բալիստա» ականանաւերը։ Մի փոքր հեռու ընթանում էր կօնտր-ադմիրալ Էսսէնի ականանաւերի նաւախումբը, որը ուղեկցում էր Ֆրանսիական նաւատորմին։

Ծովային մինիստրը բարձրանալով «Վէրիտէ» նաւը՝ Թագաւոր Կայսրի անունից ողջոյն մատուցեց նախագահին։ Ապա ծողոյն մատուցեց մինիստրը վերադարձաւ «Շտանդարտ» նաւը։ Ուրբայի, «Վիվ Ռիւսի» աղաղակները, մարսէլիէզը և ռուսական ազգային հիմնի հնչիւնները թնդում էին նաւակայանում։

3 ժամ 40 րոպէին նախագահը իջաւ «Վէրիտէ» նաւից և մարսէլիէզի հնչիւնների ներքոյ իր շքախմբի ուղեկցութեամբ մտաւ շքեղ նաւակը, ուր իսկոյն բերվեց նախագահի դրօշակը։ Նաւը գնաց դէպի «Շտանդարտ» զրահանաւը։ Նաւի սանդուղքի մօտ դիմաւորեցին նրան օֆիցէրները, իսկ սանդուղքի վերին աստիճանի հրապարակի վրա նախագահին դիմաւորեց Թագաւոր Կայսրը։ Նորին Մեծութիւնը կրում էր Գատուաւոր Լէգիոնի ժապաւէնը։ Թագաւոր Կայսրի դրօշակի հետ միասին Կայսերական դրօսանաւի վրա ծածանվեց նախագահի դրօշակը։ Սկսվեց թնդանօթաձգութիւն։ Մարսէլիէզի հնչիւնները թնդացրին նաւակայանը։ Թագաւոր Կայսրի և նախագահ Ֆալիէրի հանդիպումը ամենասրտագին բնաւորութիւն ունէր։ Ապա Նորին Մեծութիւնը և բարձր հիւրը գնացին Թագուհի Կայսրուհու մօտ, որ կանգնած էր նաւի վերին տախտակամածի վրա։ Այդտեղ գտնվում էին նոյնպէս Թագառանդ Ցէսարէվիչը և Նոցին Մեծութիւնների Օգոստափառ դուստրները։ Թագուհի Կայսրուհին և Մեծ Իշխանուհիները պայծառ զգեստներով էին, Թագաժառանգ Ցէսարեվիչը սպիտակ շորով։ Նախագահը համբուրեց Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ձեռքը և բարևեց Օգոստափառ երեխաներին։ Նաւի տախտակամածի վրա կանգնած էին նաւի տարեցները, որոնք մարսէլիէզ էր նուագում։ Նախագահը Նորին Մեծութեան հետ միասին, ողջունելով, անցաւ պատուաւոր պահակախմբի առջևից։ Ապա տեղի ունեցաւ մինիստրների և շքախմբի անդամների փոխադարձ ծանօթութիւն։ Ռուսական շքախմբի անդամները թուում գտնվում էին պալատի, արտաքին գործերի և ծովային մինիստրները, Պարիզի ռուսաց դեսպանը, պրիբալտեան գեներալ-նահանգապետը, Էստլանդիայի նահանգապետը, նահանգական ազնուականութեան պարագլուխը։ Մօտ 10 րոպէ մնալով «Շտանդարտ» նաւի վրա, նախագահը հրաժեշտ տուեց Նոցին Մեծութիւններին և սպիտակ ուղեկցութեամբ գնաց դէպի «Վէրիտէ» նաւը։ Նորից ծածանվեց «Վէրիտէի» վրա նախագահի դրօշակը։ Տեղի ունեցաւ կրկին թնդանօթաձգութիւն։ («Հ. Գ.»)

—

Ռէվէլ, 14 յուլիսի։ Յուլիսի 13-ին Նոցին Մեծութիւնները Օգոստափառ երեխաներով ներկայ եղան պատարագին «Շտանդարտ» նաւի վրա։ Ապա տրվեց Բարձրագոյն նախաճաշ, որին հրաւիրվեցին Նոցին Մեծութիւններին ուղեկցող անձինք, ծովային մինիստրը, նաւերի հրամանատարները և պրիբալտեան գեներալ-նահանգապետը։ Կէսօրից յետոյ 3 ժամին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան պալատի և ծովային մինիստրների, Նորին Մեծութեան ֆլագ-կապիտանի և ուրիշ անձանց ուղեկցութեամբ գնացին «Սլաւա» զրահակիրը, որի վրա ծածանվեց Նորին Մեծութեան բրէյդ-վիմպէլը։ «Սլաւայի» հրամանատարը բաղդ ունեցաւ մատուցանելու Կայսրուհուն մի ծաղկեփունջ Անդրէվեան դրօշակի գոյնի ժապաւէններով։ Թագաւորը անցաւ բարևելով օֆիցէրներին և շտաբերին ողորմածաբար հարց ու փորձ էր անում։ Ապա Նոցին Մեծութիւնները հրաժեշտ տալով և շնորհակալութիւն յայտնելով օֆիցէրներին, 4 ժամ 40 րոպէին, գնացին «Շտանդարտ» նաւը։ 4 ժամ 50 րոպէին «Շտանդարտի» վրա ծածանվեց հետևեալ սիգնալը. «Թագաւոր Կայսրը գոհունակութիւն է յայտնում զարդէժարբենան զօրաբաժնին»։ Նոյն օրը Բարձրագոյն ճաշին հրաւիրված էին Նոցին Մեծութիւններին ուղեկցող անձինք, ծովային մինիստրը, նաւերի հրամանատարները և այլն։ («Հ. Գ.»)

—

ՍՏՕԿՀՈԼՄ։ Յուլիսի 13-ին նախագահ Ֆալիէրը, սրտագին հրաժեշտ տալով արքունական ամրոցից, մեկնեցաւ Ռուսական զրահանաւերի ուղեկցութեամբ։ Ֆրանսիական նաւատորմի նաւերը ի պատասխան բարձրացրին զինուորական դրօշակները։ Հէնց այդտեղ դիմաւորեցին Ֆրանսիական հանրապետութեան նախագահին ֆրանսիական դեսպանութեան պաշտօնեաները Ռուսաստանում։ Ռէվէլեան նաւակայանում արդէն ցերեկվայ 2-րդ ժամին կարելի էր ծովի վրա տեսնել երկու խումբ ծուխեր, որոնք ցոյց էին տալիս ֆրանսիական նաւատորմի մօտենալը։ Նրա առաջից ընթանում էին ֆրանսիական «Կասսինի» նաւը ֆրանսիական նախագահի դրօշակի տակ, «Վէրիտէ» զրահակիրը, ապա նրան ուղեկցող «Դիւպլեքսիտուար» զրահակիր կրէյսերը, վերջապէս «Արկէբիւզ» և «Բալիստա» ականանաւերը։ Մի փոքր հեռու ընթանում էր կօնտր-ադմիրալ Էսսէնի ականանաւերի նաւախումբը, որը ուղեկցում էր Ֆրանսիական նաւատորմին։

Ծովային մինիստրը բարձրանալով «Վէրիտէ» նաւը՝ Թագաւոր Կայսրի անունից ողջոյն մատուցեց նախագահին։ Ապա ծողոյն մատուցեց մինիստրը վերադարձաւ «Շտանդարտ» նաւը։ Ուրբայի, «Վիվ Ռիւսի» աղաղակները, մարսէլիէզը և ռուսական ազգային հիմնի հնչիւնները թնդում էին նաւակայանում։

3 ժամ 40 րոպէին նախագահը իջաւ «Վէրիտէ» նաւից և մարսէլիէզի հնչիւնների ներքոյ իր շքախմբի ուղեկցութեամբ մտաւ շքեղ նաւակը, ուր իսկոյն բերվեց նախագահի դրօշակը։ Նաւը գնաց դէպի «Շտանդարտ» զրահանաւը։ Նաւի սանդուղքի մօտ դիմաւորեցին նրան օֆիցէրները, իսկ սանդուղքի վերին աստիճանի հրապարակի վրա նախագահին դիմաւորեց Թագաւոր Կայսրը։ Նորին Մեծութիւնը կրում էր Գատուաւոր Լէգիոնի ժապաւէնը։ Թագաւոր Կայսրի դրօշակի հետ միասին Կայսերական դրօսանաւի վրա ծածանվեց նախագահի դրօշակը։ Սկսվեց թնդանօթաձգութիւն։ Մարսէլիէզի հնչիւնները թնդացրին նաւակայանը։ Թագաւոր Կայսրի և նախագահ Ֆալիէրի հանդիպումը ամենասրտագին բնաւորութիւն ունէր։ Ապա Նորին Մեծութիւնը և բարձր հիւրը գնացին Թագուհի Կայսրուհու մօտ, որ կանգնած էր նաւի վերին տախտակամածի վրա։ Այդտեղ գտնվում էին նոյնպէս Թագառանդ Ցէսարէվիչը և Նոցին Մեծութիւնների Օգոստափառ դուստրները։ Թագուհի Կայսրուհին և Մեծ Իշխանուհիները պայծառ զգեստներով էին, Թագաժառանգ Ցէսարեվիչը սպիտակ շորով։ Նախագահը համբուրեց Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ձեռքը և բարևեց Օգոստափառ երեխաներին։ Նաւի տախտակամածի վրա կանգնած էին պատուաւոր պահակախմբի առջևից։ Ապա տեղի ունեցաւ մինիստրների և շքախմբի անդամների փոխադարձ ծանօթութիւն։ Ռուսական շքախմբի անդամները թուում գտնվում էին պալատի, արտաքին գործերի և ծովային մինիստրները, Պարիզի ռուսաց դեսպանը, պրիբալտեան գեներալ-նահանգապետը, Էստլանդիայի նահանգապետը, նահանգական ազնուականութեան պարագլուխը։ Մօտ 10 րոպէ մնալով «Շտանդարտ» նաւի վրա, նախագահը հրաժեշտ տուեց Նոցին Մեծութիւններին և սպիտակ ուղեկցութեամբ գնաց դէպի «Վէրիտէ» նաւը։ Նորից ծածանվեց «Վէրիտէի» վրա նախագահի դրօշակը։ Տեղի ունեցաւ կրկին թնդանօթաձգութիւն։ («Հ. Գ.»)

—

Ռէվէլ, 14 յուլիսի։ Յուլիսի 13-ին Նոցին Մեծութիւնները Օգոստափառ երեխաներով ներկայ եղան պատարագին «Շտանդարտ» նաւի վրա։ Ապա տրվեց Բարձրագոյն նախաճաշ, որին հրաւիրվեցին Նոցին Մեծութիւններին ուղեկցող անձինք, ծովային մինիստրը, նաւերի հրամանատարները և պրիբալտեան գեներալ-նահանգապետը։ Կէսօրից յետոյ 3 ժամին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան պալատի և ծովային մինիստրների, Նորին Մեծութեան ֆլագ-կապիտանի և ուրիշ անձանց ուղեկցութեամբ գնացին «Սլաւա» զրահակիրը, որի վրա ծածանվեց Նորին Մեծութեան բրէյդ-վիմպէլը։ «Սլաւայի» հրամանատարը բաղդ ունեցաւ մատուցանելու Կայսրուհուն մի ծաղկեփունջ Անդրէվեան դրօշակի գոյնի ժապաւէններով։ Թագաւորը անցաւ բարևելով օֆիցէրներին և շտաբերին ողորմածաբար հարց ու փորձ էր անում։ Ապա Նոցին Մեծութիւնները հրաժեշտ տալով և շնորհակալութիւն յայտնելով օֆիցէրներին, 4 ժամ 40 րոպէին, գնացին «Շտանդարտ» նաւը։ 4 ժամ 50 րոպէին «Շտանդարտի» վրա ծածանվեց հետևեալ սիգնալը. «Թագաւոր Կայսրը գոհունակութիւն է յայտնում զարդէժարբենան զօրաբաժնին»։ Նոյն օրը Բարձրագոյն ճաշին հրաւիրված էին Նոցին Մեծութիւններին ուղեկցող անձինք, ծովային մինիստրը, նաւերի հրամանատարները և այլն։ («Հ. Գ.»)

—

ՍՏՕԿՀՈԼՄ։ Յուլիսի 13-ին նախագահ Ֆալիէրը, սրտագին հրաժեշտ տալով արքունական ամրոցից, մեկնեցաւ Ռուսական զրահանաւերի ուղեկցութեամբ։

քայական ընտանիքին, ճանապարհ ընկաւ Ռէվէր։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ուրմիա (Ուշացած է հեռագրի փչանալու պատճառով մինչև Ուրմիա)։

Յուլիսի մօտ 9-ին ասկէրների մի վաշտ գրաւեց Էնզէլի շրջանի սիւննիտական Կուլինջի գիւղը, Ուրմիայից դէպի հիւսիս, ոչ հեռու լճից, Սալմաստ տանող ճանապարհի վրա։ Մի ուրիշ վաշտ գտնվում է Էնզէլիի մօտերքը Սօմալում։ Այդ գօրամասերը նորերս եկան Վանից և Մարէշխիրէից։ Ասկէրների թիւը հասնում է 400 մարդու։ Սալմաստի ազգաբնակութիւնը երկիւղի մէջ է, որովհետև քաղաքին մօտենում է քիւրդերի պարագլուխ Շիկակա Սիսկօ, որը Մակուի խանից հրաման է ստացել պատժել տեղական անջուրմանի անդամներին։ Ուրմիայի հեռագրական հաղորդակցութիւնը Թաւրիզի հետ արդէն մի շաբաթ է, որ ընդհատված է։ («Հ. Գ.»)

—

Բագու.— Թէհրանից այստեղ են ժամանել բարձրաստիճան էմիգրանտները, որոնք փախել են շահի բարկութիւնից։

Աստրախանից հեռագրում են, որ ի նկատի առնելով խօլերային հիւանդութիւնների սաստկանալը արագութեամբ կազմակերպվում են ֆելդշերական կէտեր։

—

Պետերբուրգից հեռագրում են «Баку» լրագրին.

«Պաշտօնապէս հերքվում է տեսուչների հաճագուժար հրաւիրելու մասին տարածված լուրը։

«Ֆինլանդական սենատը մի առաջարկութիւն է արել Թագաւորին Սուոլիպինի այն ճառի համար, որ նա արտասանել էր Դումայում։

«Ֆինլանդական սօցիալ դեմօկրատ պատգամաւորների խորհրդակցութեան ժամանակ՝ սէյմում բռնելիք տաքտիկայի մասին՝ պարզվել է, որ զօրեղ է Ռուսաստանի նկատմամբ զգոյշ և չափաւոր վերաբերմունք ցոյց տալու հոսանքը։ Դա բացատրվում է նրանով, որ երկիւղ են կրում, թէ մի գուցէ արձակեն սենատը և փոփոխութեան ենթարկեն ընտրողական օրէնքը։

«Վերսկսվել են այն լուրերը՝ թէ առաջիկայ սեպտեմբեր ամսին ռուսական ջրերն է գալու Վիլհէլմ կայսրը։

«Ցայսմի նկարիչ Ռէպինը «Слово» լրագրին ուղղած մի նամակով խնդրում է իր ստորագրութիւնը ևս միացնել այն միլիոնաւորների ցուցակին, որոնք պատրաստ են ստորագրել կոմս Տօլստոյի մահվան պատիժների մասին գրած յօդուածին։

«Լաւ է պատում, որ դատաստանական պալատի առաջ նախագահ Կրաշենինիկովը նշանակվում է տրգրարադատութեան մինիստրի օգնական»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

—

Թիւրքիայում յեղափոխութիւն է...

Թիւրքիայում հրատարակված է սահմանադրութիւն...

Սուլթան Արդիւլ-Համիդը, նա, որին քաղաքակիրթ աշխարհը Դէլդատոնի բերանով մկրտեց «կարմիր դաղան» և «մեծ մարդասպան» անունով, նա, որի օրով ամբողջ երկիրները կործանվեցին, հարիւր հազարաւոր մարդկանց արիւնը թափվեց վտակներով, նա, այսօր, հրամարակ է հրատարակում, հրաժարում զուժարել պարլամենտ, ջնջել ցենզուրան, դադարեցնել ոստիկանութիւնը, ներել քաղաքական յանցաւորներին, որոնցով վխտում են Թիւրքիայի և Արաբիայի բանտերը...

Հաւատանք այս հրաշքներին։

Հաւատանք, որ յեղափոխութեան հրաշունչը անցաւ և՝ Թիւրքիայի վրայով։

Հաւատանք, որ աշխարհիս դատարան ծայրերում, անկիւններում ապատանդական թափառող հայ պանդուխտները կարող են այսուհետև ազատօրէն, առանց որևէ արգելքի վերադառնալ իրանց հայրենիքը, իրանց գիւղերը, իրանց օջախները, մշակել, հերկել առաջվայ պէս իրանց դաշտերը, ցանել, հնձել իրանց արտերը, ապա երթևեկել մի գիւղից միւսը, մի քաղաքից միւսը։

Պէտք է հաւատանք։ Եւ ինչու չը հաւատանք։ Հաւատը յաճախ հրաշքներ է գործում։

Հաւատանք, որ հարիւրհազարաւոր Թիւրք և հայ անմեղ զոհերի ալ արիւնը, ցօղելով գաշտերը և արտերը, բեղմնաւորել է հողը և այսօր տալիս է իր փրկարար ծիլը, ազատութեան, փրկութեան ծիլը...

Եթէ մեր հաւատը չիրականանայ, յուսախաբութիւնը, հիասթափութիւնը սոսկալի և զարհուրելի կը լինի։

Եթէ Թիւրք ժողովրդի համար անտանելի էր դարձել բռնակալ Համիդի լուծը, որքան նա անտանելի էր թշուառ հայ ժողովրդի համար, որ չունէր նոյնիսկ Թիւրքի վայելած իրաւունքների մի տասներորդական մասն անգամ։

Յեղափոխութիւնը առաջ բերեց այն կուսակցութիւնը, որ յայտնի է «երիտասարդ-Թիւրքեր» անունով և որոնց պետերից մինն է մեզ լաւ ծանօթ Ահմէդ Ռիզա-բէյը, Պարիզում հրատարակվող «Մեշվերէթ» թերթի խմբագիրը։ Այդ կուսակցութեան մասին մենք կը տանք առանձին յօդուածներ, իսկ այժմ չենք կարող չը շեշտել, որ «երիտասարդ-Թիւրքերը» համարվում էին մինչև վերջերս իբրև մի տակը, թոյլ և նոյնիսկ անընդունակ կուսակցութիւն, բայց այժմ մենք տեսնում ենք, որ այդ կարծիքը սխալ է եղել, որ «երիտասարդ Թիւրքերը» գործում են եղել լռելեայն, տակտիկութեամբ, սպասելով յարմար ժամանակի և օրէի, գործելով ոչ յախուռն, ոչ ի ցոյց մարդկան, ոչ քաղաքաշոռութեամբ։

Այո, «երիտասարդ-Թիւրքերը» գործում էին լռելեայն և գիտէին ինչ շրջանում գործել։ Նրանք գործում էին համբերութեամբ, որովհետև գործում էին այն օրից, երբ արիւնարբու սուլթանը ջնջեց Միդհաթ փաշայի սահմանադրութիւնը, ուղարկեց Միդհաթին աքսոր, ուր և սպանել տուեց։ Նրանք գործում են 1878-ից ի վեր, ուրեմն նրանք գործում են լռելեայն ամբողջ 30 տարի, և երբ բօլէն հասած համարեցին, իրանց սերմանած հունձը հասունացած տեսան, նրանք ասպարէզ եկան հնձելու և կատարեցին յեղափոխութիւնը շատ քիչ զոհեր տալով։

Ի հարկէ, կը գտնվեն մարդիկ, նոյնիսկ կազմակերպութիւններ, որոնք մնապարծութեամբ կամ դարձեալ ի ցոյց մարդկան գուցէ և պոռան, թէ իրանք ևս մասնակցեն այդ յեղափոխութեան հետ, որովհետև մի քանի ամիս առաջ հաճերաշխութիւն են հաստատել «երիտասարդ-Թիւրքերի» հետ (և արդէն «Զանգակ» թերթը բացել է այդ մնապարծութեան տուրը մի կազմակերպութեան վերաբերմամբ, որ նոյնիսկ դարանապետներ է պահանջել (sic!) սուլթանից սահմանադրութեան համար), բայց այժմ ժամանակ չէ ուշադրութիւն դարձնել այդ մնապարծութիւնների վրա, այլ անհրաժեշտ է մտածել, թէ ինչ անել կամ ինչպէս գործել, որ սահմանադրական ըէժիմի ներմուծմամբ բացվի փրկութեան, ազատութեան դուռը և թշուառ հայ ժողովրդի համար։

Որքան յայտնի է, «երիտասարդ-Թիւրքերի» ծրագիրը բացասում է առանձին ազգութիւններին կամ ժողովուրդներին որևէ ազատութիւն տալու գաղափարը. նա պահանջում է ընդհանուր ըէֆորմներ ամբողջ օսմանեան կայսրութեան համար, նա ճանաչում է միայն օսմանեան քաղաքացի և և ոչ Թիւրք, քիւրդ, հայ, յոյն։ Պէտք է լինի մի ընդհանուր օսմանեան պետութիւն, մեծազօր փադիշահի գայիսօնի ներքոյ, իսկ տիրապետող կրօնը պէտք է լինի իսլամը։

Արդեօք այդպիսի հանգամանքներում ջուրը չեն ընկնում թէ Բերլինի, թէ Կրեսէի դաշնագիրերով և թէ մայիսեան ծրագրով հայերին խոստացված ըէֆորմները, ապահովութիւնները, հայերի ձեռք բերած միջազգային իրաւունքները։

Բայց, կրկնում ենք, այժմ դեռ ժամանակ չէ այդպիսի քննադատութիւններով զբաղվելու։ Հայերը, ինչպէս և Թիւրքիայի միւս քաղաքացիները, ինչ ազգութեան և կրօնի որ պատկանեն, պէտք է աշխատեն, ձեռք-ձեռքի տան, որ, արդարև, իսկական սահմանադրական ըէժիմ հաստատվի, որ սուլթանը այս անգամ էլ չը խաբէ, բայց միևնոյն ժամանակ պէտք է հայերը հեռատեսութեամբ գործեն, որպէսզի, անաջողութեան դէպքում, քաւութեան նոխազը դարձեալ իրանք չը դառնան, ինչպէս մինչև այժմ։

Ուստի և մեզ թւում է, որ դաշնակցականը յոխորտանքները և մնապարծութիւնները, թէ իբր Դաշնակցութիւնն է առաջ բերել ներկայ յեղափոխական շարժումը, թէ նա երաշխաւորութիւններ է պահանջում սուլթանից, աւելի քան երեխայական են և, յամենայն դէպս, գործին օգնելու փոխարէն, կարող են վնասել։ Հայ-յեղափոխականները պէտք է վերջապէս նոյն իսկ «երիտասարդ-Թիւրքերից» սովորեն լռելեայն, շրջանկատ գործելու առաքինութիւնը...

Շահրիար

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Ցղնա (Նախիջևանի գ.), 7 յուլ.

Շնորհիւ Թիֆլիս-Զուլֆա երկաթուղու գծին այս տարի Ցղնան կենդանութիւն է ստացել։ Ցղնայի զովաշունչ օդը, խնամքով մշակված ճոխ բուսականութիւնը, բարձր լեռների միջից հոսող գետակը, սառնորակ աղբիւրները խոստանում են գիւղին ապագայում լաւ ամառանոցի յարմարութիւններ ստանալ իր տարագիր որդիների և կողմնակի այցելուների համար։

Գիւղը կենդանանում է, նրա գլխաւոր կարիքները հոգացվում են. շրջանային հիւանդանոց, բժիշկ, ժանկաբարձուհի, ֆելդշերներ՝ արդէն գործում են ի մեծ մխիթարութիւն շրջանիս աղքատ համար դասակարգի։ Կառավարութեան թոյլտուութեամբ արդէն ձեռնարկել են 9 արշին լայնութեամբ խճուղի շինելուն. մեծ մասը արդէն շինված է, մինչև օգոստոսի վերջը պատրաստ կը լինի. խճուղին բաժանվում է Ագայի-Ագուլիս ճանապարհից մինչև Ցղնա, որ 15 վերստ տարածութիւն է։ Հիւանդանոցը Ցղնա բաց անելու մտքին նպաստել է մեր համագիւղացի Կարապետ ծ. վարդապետը՝ Երևանում թեմական փոխանորդ եղած ժամանակ. բայց վերջնական իրագործման և բացման, նաև խճուղի և պօստային բաժանմունքը բաց անելուն մեծ ջանք և եռանդ է գործ դրել պ. Լևոն Սարգսեանը, որ իր օրինակելի և տոկուն գործունէութեամբ մեծ պատիւ է բերում իր ծննդավայրը Ցղնա գիւղին։ Մախբերի համար նիւթական պակասութիւն է զգացվում. Ցղնայի հարուստ վաճառականները՝ Մօսկվայում, Նուխում, Բագուում, Թիֆլիսում, Զաքաթալայում, որոնք նիւթապէս ապահովված մարդիկ են, շատ ժլատ են գտնվել նպաստ տալու մէջ, որը շատ ցաւալի. երևոյթ է այդպիսի մի կենսական օգտաւէտ հասարակական գործի համար։ Կարիքը 2—3 հազար ռուբլու պահանջ է, որը կրկնակի, եռակի կարող է նպաստել Մօսկվայում կամ Նուխում վերաբնակած մի վաճառական. այդպիսով մի յաւիտենական և օրինակելի յիշատակ կը թողնէ նա իր ծննդավայրում։

Գիւղը ունի մի փառաւոր սրբատաշ քարէ հոյակապ եկեղեցի, որի գոյութիւնը 200 տարուց աւելի է և իր նմանը չը կայ Երևանի թեմում թէ իր դիրքով և թէ մեծութեամբ։ Կանանց դրան մուտքի վրա կայ մի արձանագրութիւն, որ վկայում է՝ «Ցղնեցի իշխանները տուին 12 լիտր ոսկի և շինեցին ս. Մարիամ Աստուածածնի եկեղեցիս»։ Ահա այդ գեղարուեստօրէն հոյակապ եկեղեցին քայքայվելու վրա է. եկեղեցու՝ շնորհիւ իր բարձր դիրքի՝ հարաւային պատը արև չէ տեսնում. խոնաւութիւնից քարերը փտել են և թափվում են. եկեղեցու տանիքը, որը ծածկված է սրբատաշ քարից, ճեղքուածներ ունի, անձրևի ժամանակ կաթում է. այսպէս՝ դրսից և ներսից խոնաւութիւնը աւեր է գործում, հսկող չը կայ, տէր չունի, գիւղացիք անտարբեր են։

Գիւղի ծերունի քահանան մի տարուց աւելի է, որ վախճանվել է. այժմ Փառակա գիւղի քահանան է հովանում. սեփական քահանայ չունենք։ Ցղնան տուել է համալսարանաւարտ, ճեմարանաւարտ և թեմական դպրոցաւարտներ և մեծ կարիք է զգացվում Ցղնայի նման մի գիւղաքաղաքի արժանաւոր, կրթված, ներկայ կեանքի պահանջներին բաւարարութիւն տուող մի քահանայի, բայց դժբաղդաբար գիւղացոց մեծամասնութիւնից զերծ չէ ազգաւեր թայֆայականութիւնից, ճգնում են տգէտ, ոչ մի տեղ ուսում չը ստացած մի 50 տարեկան տիրացուի ձեռնադրել այն պայմանով, որ էժան ծիսակատարութիւն անէ, այն է՝ մեռել թաղելը—1 ր., կնունքը—50 կօպ., գերեզման օրհնելը—20 կօպ.։ Բարեբաղդաբար հոգևոր վարչութիւնը այնքան պարտաճանաչ է գտնվել, որ գիւղացոց կայացրած համախօսականը, երկրորդ թէ երրորդ անգամն է, թողել է անհետևանք և այդ տիրացուն չէ ձեռնադրվել։

Այսպէս 6-ին ընտրվեցին 2 ներկայացուցիչներ, որ գնան Ագուլիս վիճակային պատուիրակ ընտրելու կաթողիկոսական ընտրութիւնների համար։

Այս տարի մեր կողմերում ծառապտուղ չը կայ, ծաղկունքի ժամանակ փչացաւ անձրևներից. խաղողը առատ է, հացաբոյսերը նոյնպէս՝ միջակից բարձր։

Գիւղում տիրում է թանգութիւն. ցորենը 1 ր. 90 կ.—2 ր., նոր գարին 1 ր.—1 ր. 10 կ., անհալ իւղը՝ 14—15 ր., ոչխարի միսը—15 կ., հացի I տեսակը—6 կ., II տեսակը—5 կօպ.։

Գողթնեցի

—

Ախալցխա, 12 յուլիսի

Տասը տարուց աւելի է, որ քաղաքիս ապագութեան պաշտօնը վարում է Դր. Մովսէսեանը, որը աւարտել է տեղիս գաւառական ուսումնարանը։ Նրա գործունէութեան ընթացքում ոչ մի զգալի բան չէ կատարվել յօգուտ քաղաքիս հասարակութեան։

Մօտիկ ապագայում ևս լինելու է աւագի ընտրութիւն։ Ժողովրդի մեծամասնութեան ցանկութիւնն է ունենալ ուսում առած, ժողովրդականութիւն վայելող բարեխիղճ մի աւագ։ Ուստի ցանկալի է, որ գոնէ այս անգամ մեր նոր ընտրված իրաւասուները լինեն բարեխիղճ, ընտրեն այնպիսի մի անձնաւորութեան, որ արդարացնէր ժողովրդի մեծամասնութեան ցանկութիւնը։

Ախալցխացի

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ

I

Էջմիածինը

Ազատագրական շարժումը գիտակցութիւնից զուրկ մեր ժողովրդին զցելով քաոսի մէջ՝ յեղաշրջել էր և շատ հիմնական սկզբունքներ։ Էջմիածինը նոյնպէս սկսել էր տատանվել։ Մարքսի վարդապետութիւնը, կարծէք, գաղափարական Ցիսուսի ակսիօմը՝ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ» ջնջել էր կամենում հէնց հայկական այս սրբազան կենտրօնից սկսելով։

Լրագիրները հաղորդում էին, որ փակվել են Էջմիածնի սեղանատունը, փուռը, ճեմարանը փակվելու վրա է հայն հայն։

Բայց որքան վշտացրեց ինձ մի օր այն յայտարարութիւնը, որ կարդացի պաշտօնական «Кавказъ» լրագրում։ Ս. Էջմիածինը կապալով է տալիս Մայր Աթոռի տպարանը և կապալառուներին հրաւիրում է բանակցել սինոդի հետ։

Զայրոյթով լի իսկոյն մի նամակ գրեցի սինոդի անդամ հ. Բարգէն վարդապետին, կշտամբելով միաբանութեանը՝ որ նա այսօր Մայր Աթոռի տպարանն է տալիս կապալով, վաղը նրա օրգան «Արարատը» կը տայ կապալով, միւս օրը ճեմարանը, յետոյ վեհարանը և բնական է յետոյ էլ... Իշման ս. Տաճարը և Լուսաւորչի Աթոռը։

Աւելացրի, որ եթէ միաբանութեան մէջ չը կան այլևս մարդիկ, որ ըմբռնեն իրանց անելիքը, դրսից անշուշտ շատերը կը գտնվեն, որ Մայր Աթոռին կը նուիրվեն հաւատարմութեամբ։

Գրեցի, որ ես ինքս պատրաստ եմ ժամանակաւորապէս գնալ Էջմիածին և բարեկարգելու տպարանը, այն պայմանով, որ կապալով չը տրվի և չը գտնվեն ուրիշ ձեռնհաս մարդիկ, առանց ինձ, այդ անելու։

Հ. Բարգէնից ստանում եմ մի գրութիւն, որով հաղորդում է, թէ նամակս նոյնիսկ Վեհափառ Հայրիկն էլ է կարդացել, շատ ուրախացել, մխիթարվել հայն հայն, ու խնդրում է ինձ, որպէսզի շուտով մանրամասն առաջարկ գրեմ։ Մի երկու օր չանցած ստանում եմ պ. Խորէն Խրիմեանից նամակ, որը նոյնպէս Հայրիկի կողմից գոհունակութիւն է յայտնում և խնդրում գրել պայմաններ։

Մտածում եմ. Տէր իմ Աստուած, ինչ պայմաններ գրեմ, ինչ առաջարկեմ...

Ես գրում եմ մի ընդարձակ ծրագիր Վաղարշապատի վերաշինութեան, սկսած նախ և առաջ մի մեծ հիւրանոցից, որ օտարականն էջմիածին գալուց նախ իջնելու տեղ ունենայ։ Ապա վեհարանից հայն հայն։

Հրապուրիչ մի նամակ եմ ստանում դիւղատնտես պ. Կոստ. Մելիք-Շահնազարեանից։

Մի խօսքով օդային ամրոցներ...

Գարնան (1907 թ.) հայոց Հայրիկը Թիֆլիս է գալիս. ինձ հրաւայում է՝

—Եկուր Էջմիածին։

—Եթէ անհրաժեշտ է, Վեհափառ Հայրիկ, պատրաստ եմ։

Վերջապէս ամառը արտասահման մեկնելուց առաջ երեք օրով գնում եմ Էջմիածին։ Գիւղատնտես պ. Կ. Մ. Շահնազարեանին խոստացել եմ եւրոպացի կապիտալիստների ուշադրութիւնը դարձնել վանքի հողերը ոռոգելու և շահագործելու մտադրութեանը։ Անձամբ կամենում եմ տեսնել այդ հողերը և տեղուտեղ պ. Կ. Մ. Շահնազարեանի և միւսների հետ խօսել։

Եւ որքան հայիւ է ս. Էջմիածինը իր ալիզարդ Մասիսով, Արարատեան դաշտ և երբեմն մայրաքաղաք Վաղարշապատ գիւղը։

Մրգաղում ենք վեհարանի հոյակապ նոր շինութիւնը, որ բաղաբանակ շուշեցի պ. Արշակ Ղուկասեան, ասում են, կամենում է կառուցանել. ապա կիսաւեր պարիսպների ետև նոր շինութիւնները, վեհարանին կից եպիսկոպոսարանները և այլն, և այլն։

Շատ սիրուն է և ուրախալի Սուքիաս եպիսկոպոսի կառուցած ապարանան և եպիսկոպոսի մնարանութեան համար շէնքերը։

«Մշակի» № 149 ում կարդում եմ, որ հ. Մեսրոպ վարդապետը ժառանգաւորաց համար նոր շէնք է կառուցանում պ. Իւլիթ Աւան-Ռազաշեանի ծախսով։

Ես չեմ երկբայում, որ ժպիտրոս Մեսրոպ վարդապետը լաւ մտորումներ չունի ս. Էջմիածնի համար, չեմ երկբայում, որ նրա պատասխանատուութեամբ կառուցվող շէնքը անհամապատասխան չի լինի նպատակին և պահանջին, բայց ես հայրենիքի վերաշինութեան ընդհանուր ծրագիրը աչքի տակ ունենալով՝ իրաւ եմ յայտնում, որ Էջմիածինը և Վաղարշապատը թէ ներքին և թէ արտաքին իմաստով վերաշինվեն բազմակողմանի քննված, զննված և կազմած ծրագիրներով։

Սրբազան տեղակալի անձնական պարտքն է արգելել ոչ մի քար տեղահան անելուն, մինչև կը գայ և կը բազմի ազգից ընտրված լիազօրը Լուսաւորչի գահին։

Անմիաբանութիւնը կործանեց Հայաստանը, իսկ Էջմիածնի անմիաբան միաբաններն էլ կործանել են կամենում Մայր Աթոռը միմեանց ներհակ, նոյնիսկ լաւ գործ կատարելով։

Տ.

ՌՈՃԻԿ ԹԷ՞ ԾՈՒԽ

—

«Մշակի» № 84-ի մէջ կարդացի պ. Կ. Ղազարեանցի նամակը, որով յայտնում էր, որ Թիֆլիսի քահանաներից 41 հոգի խնդրով դիմել են ս. առաջնորդին և խնդրել են՝ «իրանց ազատելու այնքան նուաստացնող և չարիքներ ծնող կամաւոր մուրացկանութիւնից», այսինքն՝ վերացնելու ծխական սիստեմը և հաստատելու ռոճիկի սիստեմը։

Եթէ չեմ սխալվում, 1901 թէ 1902 թուականն էր, որ Թիֆլիսի թեմական առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանից հրաման ստացայ ներկայացնելու իրան մի նախագիծ Թիֆլիս քաղաքի քահանաներին ռոճիկ սահմանելու վերաբերութեամբ։ Ներկայացրի նախագիծը. բայց երևի նրան պաշտօնից հեռացնելու և նորից վերադարձնելու և 1903 թ. յայտնի դէպքերը ժամանակ չը տուին այդ միտքը կատարելու։ Այժմ, շատ ուրախալի է, որ նոյն կարիքը իրանք քահանաներն են զգացել և իրանք են դիմումն անում ու խնդրում։ Ասում եմ ուրախ եմ, որովհետև ռոճիկի սիստեմն ընդունող ու գնահատող քահանաների թիւը շատ ու շատ պակաս է մեզանում։ Եւ սա շատ հասկանալի է, քանի որ ռոճիկի սիստեմը քահանային զրկում է նիւթապէս իր ու իր ծխականի անձնական յարաբերութիւնից կախված լինելու պայմանից և դնում է նրան՝ քահանային՝ ծխական ժողովի հաւաքական դատաստանի ներքոյ լինելու պայմանի մէջ։

Ինչպէս յայտնի է, ռոճիկի սիստեմը առաջին անգամ ընդունվեց և գործադրվեց Բաթում քաղաքում իմ առաջարկած պայմանի զօրութեամբ։ Տասը տարին լրացաւ արդէն։ Իր ժամանակին մամուլը ուրախութեամբ ողջունեց այդ նորութիւնը։ Շատ տեղերից դիմումներ արին Բաթում և խնդրեցին հրահանգել այն բոլոր միջոցները, կանոնները, որոնց հիման վրա փոփվել ու ձևվել է ռոճիկի սիստեմը։ Լսում էին, որ Բագուն ևս կազմել է իր ժողովները, ընտրել է յանձնաժողովներ այդ սիստեմը մտցնելու համար, բայց մինչև այսօր ոչ մի տեղ չիրականացաւ։ Այո, չիրականացաւ։ Պատճառը։ Պատճառը մեծ մասամբ այն քահանաներն են, որոնց համար ծածուկ—գողունի դրամ ստանալը կրօնական մի սրբութիւն է, որոնց համար ծխականաւորութիւնից առաջ սակարկութիւն անելը՝ հոգեկան մի մեծ բաւականութիւն է, որոնց համար բուրվառ ծխելով «թարախ» մանածելը, սև փողեր ժողովելը աղքատների չափ հեղ լինելու և մուրացիկի մուրալու վիճակը բարձրացնելու մի գեղեցիկ նշան է. մի խօսքով, որոնց համար եկեղեցին և եկեղեցական արարողութիւնները շահագործութեան մի խանութ կամ միջոցներ են։

Այս ամենի հետ միասին փորձված քահանաները շատ խելօք և գործնական են ասելով. ա) Բաց ռոճիկի քանակը նախանձ է շարժում ժողովրդի մէջ։ Ծածուկ ասածդ չէ երևում, թէկուզ նա լինի կրկնապատիկ ու եռապատիկը, բայց բաց ստացածդ զգուում է հայ ուսուցչին, հայ գրագէտին, հայ արտիստին, հայ բանուորին, հայ ժողովրդին։ բ) Ծխատէր լինելով՝ ստանում ես ապրուստիանդ համար. բաւական է, որ վարժված ես ուզելու, բաւական է, որ տասանորդի օրհնեալ նուիրականութիւնը մէջ տեղումն է։ Իբրև հայր, իբրև հովիւ, իբրև քահանայ ապատ ես ուզելու բաժին—գինուց՝ գինի, ցորենից՝ ցորեն, լիւղից՝ լիւղ, պանրից՝ պանիր, բամբակից՝ բամբակ, բրդից՝ բուրդ, և այլից՝ և այլն։ Եւ այդ ամենից շատ թէ քիչ կը ստանաս—ասած է՝ ուզողի մի երեսը, չը տուողի՝ եղկու. գ) Երբ ծուխ ունես և ծխող հետ լաւ ես—գիրքդ ամուր է, հոգևոր իշխանութիւնն անդամ ոչ միայն անզօր է քեզ վնասելու, այլ և խնդարհվող է քո առաջ. իսկ ծխի հետ լաւ լինելու համար պէտք է լինել ցածուն, հեզ, ներողամիտ, համբերատար, մանաւանդ յարմարվող, այլ ոչ գիտուն, ճշմարտախօս, անաչառ, անկախ... դ) Երբ ծխատէր ես քո եկամուտների, քո ոչխարների բերքի տէրն ես. բայց երբ ռոճիկ է, տէր չես, այլ ստրուկ ես, ծառայ ես։ Ուզենան կը ձգձգեն, կը ցաւացնեն. ուզենան կը պակասեցնեն, կը կտրեն ռոճիկդ։ Ո՞ւմ պիտի բողոքես. ով է տէրդ ու դատաւորդ, ով է պաշտպանդ—եթէ դու լինես նոյնիսկ շիտակ, ազնիւ, արժանաւոր։

Եւ փորձված, գործնական քահանաների այդ ասածների մէջ կան շատ մեծ ճշմարտութիւններ, որոնք պատում են քահանաների անձնական-նիւթական կացութիւնը ամուր, շահաւէտ դարձնելու, դասակարգային դիրքը, շահերը նուազ անվտանգ պահելու շուրջը։ Ծխաբաժանութիւնը թաւալացնում է ժողովրդի, եկեղեցու հաւաքական ոյժը, զօրացնում է քահանայի անձնական շահը։ Ծխաբաժանութիւնը չլատում է եկեղեցու միութիւնը, պառակտում է եկեղեցու ամբողջութիւնը, երկրորդական-երրորդական տեղն է գնում եկեղեցու հանդանական կեանքը, ծառայում է իրան հովանող քահանայի անձնական օգտին։ Այստեղ է ծխատէր քահանայի ոյժը։

Պայմանները բոլորովին փոխվում են, երբ ծխաբաժանութեան փոխանակ ռոճիկի սիստեմն է թագաւորում։ Այս պարագայում ժողովուրդը տէր է իր քահանային։ Սա այլևս չէ բաժանված քահանաների վրա, այլ միացած մի ամբողջութիւն է ներկայացնում։

Անհատին, ծխականին հաճոյանալու պայմանները բոլորովին անպէտք են ժողովրդի ամբողջութեանը հաճոյ լինելու համար։ Այստեղ որքան և ժողովուրդն իր ընդհանուր ժողովում ունենայ անձնական հակակիրներ դէպի քահանան՝ չէ կարող միւրութեամբ մահու դատապարտել քահանայի արժանաւորութիւնը, չէ կարող առնաչառութեան և արդարութեան պահանջներ դատաստանում արհամարհել. դրանով ինքն իրան դատապարտած կը լինի։ Ժողովուրդը իրան զարգացած, որքան ինքնամանաչ, որքան բանագէտ լինի, այնքան նա պիտի իր համար վիրաւորական, ստորացնող համարի քահանաների մէջ իբրև ոչխար բաժանված լինելու դրութիւնը. ընդհակառակը նա պիտի իր ձեռքն առնի այն եկեղեցին, որ ինքն է կազմում, նա պիտի ընտրելու հետ և վերին դեկավարութիւնն ունենայ իր պաշտօնեաների և պիտի հոգատարութիւնն ունենայ նրանց ապրուստի։ Այսպէս և ամեն մի ընտրված պաշտօնեայ իրան համար պիտի պատիւ համարի, երբ ընտրվի ժողովրդի ընդհանրութիւնից, այլ ոչ խնամի ու քաջալերանքներից, երբ ծառայի ժողովրդի ընդհանուր պահանջնե-

Ամենամեծ հարգանքով ներկայացնում ենք մեր հարգելի հաճախորդներին, որ մեր գրասենյակը տեղափոխվել է նոր հասցե՝ Ալեքսանդրապոլ, Ասատրյան 17, Ապուտրեաց Դարբասեանց տան դիմաց։

Մեր փոստարկղը՝ Տ. Ֆ. Ասլանեան

—

Ֆիֆիլու 8 յուլիսի

Ընդհ. Հանրային Ընտրություններ, ԼՇՄ-ական մեր ընտրանքներ։ Ինչպես տեսանք նախորդ համարում, մեր ընտրանքները բաղկացած էին ինչպես տարբերակներ, այնպես էլ ինչպես ամբողջություն։ Ինչպես ասացինք, մեր ընտրանքները ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր։ Դրական կողմերն են՝ ազգային-ազատագրական գաղափարի հանդեպ նվիրումը, ինչպես նաև ազգային-ազատագրական գաղափարի հանդեպ նվիրումը։ Բացասական կողմերն են՝ ազգային-ազատագրական գաղափարի հանդեպ նվիրումը։ Ինչպես ասացինք, մեր ընտրանքները ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր։ Դրական կողմերն են՝ ազգային-ազատագրական գաղափարի հանդեպ նվիրումը։ Բացասական կողմերն են՝ ազգային-ազատագրական գաղափարի հանդեպ նվիրումը։ Ինչպես ասացինք, մեր ընտրանքները ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր։ Դրական կողմերն են՝ ազգային-ազատագրական գաղափարի հանդեպ նվիրումը։ Բացասական կողմերն են՝ ազգային-ազատագրական գաղափարի հանդեպ նվիրումը։

Ֆիֆիլու 11 յուլիսի

—

Ս. Վարդանեան, Ֆ. Էչմիածնի,

Ի միտ բերս ոմն Ասատուրեանցի, որ Ամերիկայի Հայոց Ազգային Խորհրդի անդամ է, ինչպես նաև Ամերիկայի Հայոց Ազգային Խորհրդի նախագահ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ստեղծվել է 1918 թվականին։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։

Ֆիֆիլու 13 յուլիսի

—

Ս. Ֆ. Ասլանեան

Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։

Ֆիֆիլու 8 յուլիսի

—

Ընդհ. Հանրային Ընտրություններ, ԼՇՄ-ական մեր ընտրանքներ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայոց Ազգային Խորհուրդը ունի 15 անդամ։

Ֆիֆիլու 11 յուլիսի

—

Ս. Վարդանեան, Ֆ. Էչմիածնի,

Ի միտ բերս ոմն Ասատուրեանցի, որ Ամերիկայի Հայոց Ազգային Խորհրդի անդամ է, ինչպես նաև Ամերիկայի Հայոց Ազգային Խորհրդի նախագահ։

պրոցները։ Աչալուրը կամենում էր բանալ իր դպրոցն և ուսուցիչ հրաւիրել։ Այդ պայմաններում շահախնդիր մարդիկ աշխատեցին ուսուցիչ հրաւիրել համադիրացի պ. Յարութիւն Եգանեանին։ Երիտասարդութիւնս իմանալով այդ, յայտարարեց, որ ինքը միանգամայն դէմ է պ. Յարութիւնին հրաւիրելուն. սակայն մութ ուժերը գաղտնի ճանապարհներով առաջ տարան իրանց միտումները։ Ամբողջ երկու տարի է, որ այդ պարոնը շահագործում է ուսուցչական կոչումը և մատաղ սերնդի դաստիարակման գործին մեծ հարուած հասցնում։ Այժմ արդէն սպառված գտնելով համբերութեան չափը, հարկ համարեցինք հրապարակ հանել մեր բողոքներն ու դժգոհութեան պատճառները։

I. Պ. Յ. Եգանեանը չէ կարող ուսուցչական մատաղ աշխատանք տանել, քանի որ 8 երկար ու ձիգ տարիներ իր ամբողջ էներգիան սպառել է ֆիզիքական աշխատանքների մէջ Բագուի նաւթային աշխարհում—մի ասպարէզ, որ բոլորովին խորթ ու հեռու է դպրոցական գործից։ Երկար տարիների ֆիզիքական աշխատանքը կարող էր միայն բրուացնել բարքերը և կղզիացնել մանուկ սերնդի դաստիարակման նուրբ ու մտաւոր աշխատանքից։ Բայքայված ջղերով և մարած ուժերով, կարծում ենք, չէ կարելի դասաւանդելու ամբիոն բարձրանալ։

II. Օտար միջավայրն ու ապրելու կենցաղը նրա համար մի այնպիսի դրութիւն էին ստեղծել, որ ինքն իր բերնով խոստովանում էր, թէ «հայրենի գիւղական կեանքն իսկ իր համար մի նոր ու բոլորովին անծանօթ աշխարհ է»։ Հէնց այդ պատճառով 2 տարվայ ընթացքում պ. Յարութիւնն ապրել է ժողովրդից բոլորովին անջատ ու հեռու, որպէս մի խորթ զաւակ, առանց բաժանելու հասարակութեան մէջ տեղի ունեցող դառնութիւններն ու քաղցրութիւնները։

III. Պ. Եգանեանը չէ կարող ուսուցչութիւն անել, որովհետև փաստօրէն նա չէ գրաւում հասարակութեան վստահութիւնը։ Ամբողջ 300—400 տնից միայն 20 աշակերտ իր բարեկամների զաւակներից են դպրոց յաճախում. իսկ հասարակութեան մեծամասնութիւնը լաւ է համարում երեխաներին անասուններ պահելու ուղարկել, քան թէ նրա մօտ դաստիարակելու տալ։ Որքան կարողացանք ստուգել, հոգաբարձութեան կամ ժողովրդի կողմից ոչ մի հրաւիրաթուղթ կամ պաշտօնական գրութիւն չէ եղել նրան. ուստի նա ապօրինի և անկոչ ուսուցիչ է հանդիսանում։

IV. Պ. Յ. չէ կարող ուսուցիչ և դաստիարակ հանդիսանալ Աչալուրը գիւղում, քանի որ չէ վայելում մատաղ սերնդի կարգանքը։ Երբ նա հարցրել էր իր նախկին աշակերտներից, թէ ինչու այլ ևս դպրոց չեն գալիս, նրանք պատասխանում են. «Մրթամ հէրու շատ բան ես սովրացրել, որ էս տարի էլ գանք»։

V. Երկու տարվայ ընթացքում պ. Յ. չէ կազմակերպել դպրոցական ոչ մի երեկոյթ կամ ներկայացում, ժողովրդական հանրամատչելի դասախօսութիւն, հաստատելով այդ բոլորը միանգամայն աւելորդ ու անպէտք, այլ աւելի շուտ յաճախել է հօր խանութը և մանակից եղել նրա վաճառականական հաշիւներին։

VI. Դէրջապէս մենք դիժում ենք ուսուցչական միութեան և հարցնում, թէ ինչպիսի դերը է բռնում դէպի պ. Եգանեանը, որ գցելով ուսուցչական արժանիքը, հաճախվում է 200 ր. պաշտօնավարել։ Մինչ այդ երիտասարդութիւնս առաջարկում էր 500 ր. մի արժանաւոր ու աշխոյժ ուսուցիչ վարձել։

Մենք կոչ ենք անում պ. ուսուցչին կամ հերթել մամուլի մէջ մեր սասծները և կամ յօժարակամ թողնել այդ կոչումն և հնարաւորութիւն տալ շուտափոյթ կարգաւորելու դպրոցի անկանոն դրութիւնը։

Խաւար ուժերով կուել-մաքառել մանուկ սերնդի կրթական գործի բարեկարգութեան դէմ, միայն և միայն ոճրագործութիւն պիտի համարել։

Ռ. Շահնազարեանց, Մ. Աբաղեանց, Ս. Մելիք-Ջանեանց, Ի. Մելիքբէգեանց, Հ. Աթաբէգեանց, Ս. Մկրտուումեանց, Յ. Վարդապետեանց, Ս. Մնացականեանց, Մովսէսեանց, Յ. Ալիխանեանց, Այ. Ալիխանեանց, Ա. Գասպարեանց, Ս. Օթարեանց, Ա. Ալիխանեանց։

—

Թիֆլիս, 6 յուլիսի

Ծանր դրութեան մէջ են գտնվում ներկայումս Հալաբարի էջմիածնեցոց դպրոցի ուսուցիչները և վերին աստիճանի անտարբերութիւնը դէպի իր պարտաւորութիւնները։

Ժամանակին հոգաբարձուներ ընտրվել են յատկապէս երիտասարդ, թարմ ոյժեր։ Ընտրող ծխականները շատ մեծամեծ ակնկալութիւններ են ունեցել դէպի նորընտիր հոգաբարձական կազմը, առանձնապէս դէպի մանկավարժ Ս. Մանասեանցը։

Այժմ, արդէն, մենք ականատեսներս՝ կարող ենք վկայութիւն տալ հոգաբարձութեան «գործունէութեան» մասին։ Զորորդ ամիսն է ահա (ապրիլ ամսից), որ դպրոցի ուսուցչական խումբը առանց մի կօպեկի նստած է իր տեղում, իսկ մանկավարժ հոգաբարձուն նրա մասին վաղուց արդէն հոգս է անում ապրելով ամառանոցի զբաղմունքների մէջ. մինչդեռ ուսուցիչների ջղերը մեռնում են ցաւերի խնդիրները մնում են լոկ որպէս «ձայն բարբառոյ յանապատի»։

Գուցէ կառարկեն պ.պ. հոգաբարձուները, թէ «փող չը կայ». սակայն ծխական ժողովն իր ժամանակին այդ մասին արդէն կարգադրել է, նոյնիսկ ցոյց էլ է տուել այն աղբիւրը, որով հնարաւոր է ծածկել յիշեալ ծախսերը։ Կը նշանակէ այս ընդմիջումը կատարվում է այն պարզ պատճառով միայն, որ մանկավարժ հոգաբարձուն չէ բարեհաճում նեղութիւն պատճառել իրան և ուսուցիչների իրաւական պահանջներին բաւարարութիւն տալ. իսկ թէ ուսուցիչները սոված են, այդ նրա վէջն էլ չէ։

Ամենացաւալին, սակայն, այն է, որ վերոյիշեալ պ. կամավարժ և «հասարակական գործիչ» հոգաբարձուն ինքը Թիֆլիսի գիմնազիաներից մէկում ուսուցիչ է և միւս հոգաբարձուներից ամենից աւելի քիչ է հոգում ու մտածում իր այդ փոքր պաշտօնակիցների կարիքների համար։

Օտար

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՂԱՔԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ ՕՐՄԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

—

Էջմիածին, 10 յուլիսի

Որովհետև «Մշակը» յայտարարեց, թէ կաթողիկոսական հարցում նա տեղ կը տայ թեկնածուների մասին թեր և դէմ կարծիքներին, ուստի անտեղի չեմ համարում ուղարկել յայտնի հայագէտ պատմաբան Գելցերի կարծիքը Օրմանեան պատրիարքի մասին, որ տպված է նրա մի աշխատութեան մէջ, որի վերնագիրն է «Geistiches und Weltliches aus dem Turkisch-Griechischen Orient», Լայպցիգ, 1900 թ., էջ 104—110։

Ցոյս ունեմ, որ չէք մերժի դեռեղել։

Ահա այդ յօդուածը.

«Կոստանդնուպօլսի այժմեան պատրիարքը նորին երանութիւն Տ. Մաղաքիա Օրմանեանն է, հայոց եկեղեցու ամենաաչքի ընկնող ներկայացուցիչներից մէկը, միևնոյն ժամանակ նշանաւոր գիտնական։ Օրմանեանը սկզբում հայ կաթոլիկ էր և Անտոնեանների ս. Պետրոս վանքի վանահայրն էր Հռոմում։ Պիոս Թ.-ի շտապովի և յամենայն դէպս շատ դժբաղդութիւնների պատճառ կօնդակը, որով նա մեծ չափով կրճատել էր ցանկանում ինչպէս բոլոր արևելեան, այնպէս էլ հայ-կաթոլիկների հոգևոր անկախութիւնը, երկպառակութիւնների հուր ձգեց այս մտաւոր կարողութիւնների կողմից բարձր կանգնած եկեղեցական միաբանութեան մէջ։ Հակառակորդներն ենթարկվեցին բանադրանքի 1870 թուի մայիսի 26-ին. դրանց մէջ էին բոլոր Անտոնեանները, իրանց վանահօր հետ միասին։ Օրմանեանը միացաւ լուսաւորչական հայերի հետ, շուտով եպիսկոպոս դարձաւ և ստանձնեց Արտամշի (Նիկոմիդիա) պատրիարքական դրամշի (Նիկոմիդիա) պատրիարքական դրամշի (Նիկոմիդիա) պատրիարքական դր